

ձառնախօսք ասում է, որ մինչդեռ օրինա-
գործ ատաղին մասի համար, այն է հարկա-
առութեան կանոնադրու դատարաններին
համար, ոչ Փոխարքան և ոչ էլ Ֆինանսնե-
րի մինիստրութիւնը չունեն ոչ մի տեղե-
կութիւն, թէ ինչպէս է հարկաւոր աղ-
գաւանակութիւնից վերցնել այն կամ այն
գումարը և որ այդ տեղեկութիւնները ազմի-
նիստացիան չէ կարող ունենալ ոչ թէ երկու
ստույգ, այլ և 22 տարեց յետոյ, մինչև
որ Անգլիոյ վարչապետ չը մտցնի զենամու-
լին ինքնավարութիւն, մինչդեռ այդ աղբյու-
րէն, —ասում է ձառնախօսք, —կովկասի բարձր
իշխանութիւնը անապայման հնարաւորու-
թիւն ունի ներկայացնելու Պետական Դու-
մային ամենամարմնաւորման տեղեկութիւն-
ներ նախահաշիվ վերաբերեալ եւ մինչ
անպատճառ պէտք է օրինադիր երկրորդ
մասը վերադարձնենք մասնաժողովին, մին-
չև որ այդ տեղեկութիւնները կը ստաց-
վին: Փոխարքան չէ կարող մերժել մեր
ցանկութիւնը, առարկելով որ այդ տեղե-
կութիւնները չը կան, որովհետեւ մինչ զի-
տեղեկ, որ նախկին Պետական Որոշորդի բո-
լոր օրինադիրը ներկայացվում էին ամե-
նամարմնաւորման հարկահանքով, ուրիշ աղ-
բյուր կարելի է անել և Դումայի վերա-
բերեալ:

Պատգամաւոր Սաղաթիւնան երկար քնն-
նադատում է ստորադիւնիները գործունէու-
թիւնը, որ նրանք ոչ մի օրոտ չեն բերում,
բայց միայն անպիտան բնո են ազդանախու-
թեան վրայ թէ ներթափանցում և թէ բարոյա-
պէս: Նա ասում է, որ թէև կովկասը այս-
քան ժամանակ միացած է Ռուսաստանին,
բայց մինչ այժմ էլ զեռ վայրենի դուռ-
թեան մէջ է, որովհետեւ տեղական ինքնա-
գործունէութիւնը ամեն միջոցով խեղդու-
մ է կառավարութեան և տեղական ազգայնա-
տարացիայի կողմից: Նա նշում է, որ չէ կարելի
այդպէս թէթել, ձեռնադիր կեր-
պով վերաբերել ներկայ օրինադիր, ինչ-
պիսի վերաբերմունք ցոյց է տալիս ֆի-
նանսական մասնաժողովը, և ստանշարում է
օրինադիրը դարձնել մասնաժողովին:

Ֆինանսների մինիստրը օգնական Պոլ-
ովսկին նորից կրկնում է իր ասածները,
որ անդրկովկասեան ազմիստարացիան ու-
նի բոլոր տեղեկութիւնները լիովին, բայց
չէ կարողացել ներկայացնել, որովհետեւ յե-
ղափոխական շարժումը քսապիկ խանգարել
է նրա հանգստութիւնը: Յամենայն դէպս
կովկասեան ազմիստարացիան միջադրել
ստորադիւնիսան մէջ անկարելի է, —կընկա-
նում է Պոլովսկին:

Բայց Սեպուսովը շտապում հաստատան
որ նա չէ էլ կանխածում, որ տեղական
ազմիստարացիան գործունէայ է: Մինչև
անգամ մի յայտնի ուղղութեամբ աւելի
քան գործունէայ և աշխատաւոր է, բայց և
այնպէս նա պնդում է, որ տեղական աշ-
միստարացիան, որ ամբողջովին կազմված
օտարներից՝ եկեղեցիներից, ոչ մի դէպքում
չէ կարող կատարել այն բոլորը, ինչ որ
հնարաւոր է անել տեղային ուժերով, ու-
րովհետեւ այդ եկեղեցիները անձնաօթ են
թէ երկրի հետ, թէ լիովին, թէ սովորութիւն-
ներն և այլն և այլն:

Սոցիալ-դեմոկրատ Չիխոնովը ընդգծում է,
որ կովկասեան ազգաբնակչութիւնը իսկա-
պէս այնքան անտեսանալի չէ, որպէս ինչ
որ նրանք հնարաւորութիւն չը կայ աւելի
և վերցնել, և այդ պատճառով սոցիալ-դեմոկ-
րատական ֆրակցիան վճռել է պաշտպա-
նել օրինադիր վերջին կէտերը ոչ թէ նրա
համար, որ կովկասի ազգաբնակչութիւնը
օգտվում լինի արտօնակա իրաւունքներով,
քան Ռուսաստանի մնացած ազգաբնակչու-
թիւնը, այլ այն պատճառով, որ իսկապէս ան-
կարող է աւել վճարել: Չիխոնովը նորայն
համաձայնում է մինիստրի օգնական Պոլ-
ովսկու հետ, որ անդրկովկասեան ազմի-
նիստարացիան արդէն չափից դուրս գործու-
նէայ է, բայց... միայն էկզիկեցիաներ
նշանակելով, պատժել խմբեր ուղարկելով
և այլն:

«Մե Տիւնովին» ի հարկէ ատիթից օգ-
տվում է և ամբարն է բարձրացնում և ինչ
է ասում, կամ աւելի ճիշդը ինչ կարող է
ասել—ոչինչ, հին երկր նոր եղանակով: Յի-
շում եմ, որ 1896 թվականին Հին-Նախի-
ձևանից գալիս էի Երևան, ինչ հետ օմի-
բուսում գալիս էր տեղական հայտարար
դատաւորի գոտարը: Նա մի գլուխ կրկնում
էր իր հօր ասած խօսքերը, որ Անգլիոյ-
կասը Ռուսաստանին արժէնում է 29 միլիոն
բուրգի բուրգով: Ի դուր տեղը: Եւ այսօր
ամբիօնից լսեցի Տիւնովինի բերանից էլ
նոյն 29 միլիոնը...

Եւ որպէսզի այդ միլիոնները մի փոքր
պակասեն, նա առաջարկում է հէնց այս
1908 թվականից հարկերը երկու անգամ ա-
ւելացնել:

Վերջապէս դիմում են քուէարկութեան.
ժողովարարն ասելով, որ քաղաքական
առաջինը յայտնում է, որ իրանք կարող
են ձայնակցել հոկտեմբերականների բա-
նաձանին այն դէպքում, եթէ ինքնավա-
րութեան խօսքից առաջ զրկեն զգե-
սովական և քաղաքային բաւերը: Ի հարկէ
պատգ. Լեբեդին շտապում է ներդուրթիւն
խնդրել, որ այդպիսի սխալ է թոյլ տուել
իրան:

Բուէարկվում է և ընդունվում է Պետա-
կան Դումայի ցանկութիւնը, որ Կովկա-
սում շտապով զենամուլային ինքնավարու-
թիւն մտցնել:

Մեր մտքով կաղանների առաջարկը, որ

օրինադիր երկրորդ մասը վերադարձի
մասնաժողովին, Պետական Դումային ընդու-
նում է օրինադիր և առաջին և երկրորդ
ընթերցանութեամբ:

Արսէն Գալանթար

ԿՈՎ. Հ. ԲԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹԱՆ ԽՈՐՀՐԴ-
ԴԱՅՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԻՄ

Ինչպէս արդէն յայտարարված էր, Կով-
կասի հայոց բարեօրոճական ընկերութեան
խորհրդի հրաւերով կերպի, մարտի 2-ին,
ընկերութեան գրասենեակում տեղի ունե-
ցաւ ձեռնարկ ինտելիգենտների ժողովը, որ
ընկերութեան խորհուրդը հրաւիրել էր
մասնաւոր կերպով խորհրդակցելու իր ու-
նենալիք կուլտուրական գործունէութեան
մի քանի կարևոր խնդիրներին մասին:

Ժողովը շատ էլ բազմամարդ չէր, մօտ
20—25 հոգի, որովհետեւ այդ օրը և այդ
ժամին մի քանի ալ ժողովներ էլ կային,
որոնց պատճառով շատերը չէին կարողա-
ցել գալ, իսկ եկածներէն մի քանի հոգի էլ
ստիպված էին ժողովի կէսին հեռանալ:

Այնուամենայնիւ աւելի քան երեք ժամ
կարծիքների փոխանակութիւն տեղի ունե-
ցաւ, և ներկայ եղողներից համարեա թէ
բոլորն էլ, շատ քիչ բացառութեամբ, ար-
տայալակցին առաջարկված խնդիրների
վերաբերեալ:

Ինչպէս ընթերցողներին յայտնի է, Կով-
կասի հայոց բարեօ. ընկերութիւնը, Գա-
լանթարի իր նոր ու ընդարձակ ծրագրի
համաձայն իրաւունք է ստացել նիւթապէս
օժանդակել թէ արդէն գոյութիւն ունեցող
մեր դպրոցներին և թէ նորերը բանալ:
Արդ՝ ընկերութեան խորհուրդը նախագահ
պ. Ս. Յարութիւնեանը, լռանալով ժողովը,
իշխեցրեց ժողովականներից այդ կէտը և
ասաց, որ թէև խորհուրդը իր միջից մի
յատուկ ուսումնարանական մասնախումբ է
ընտրել ընկերութեան ծրագրի այդ մասին
վերաբերեալ խնդիրներով զբաղվելու հա-
մար, այնուամենայնիւ խորհուրդը ցանկա-
ցել է, որ այդ խնդիրների մասին աւելի
լայն շրջանների ու ձեռնարկ անձանց կար-
ծիքները լսել չէնց դրա համար էլ ժողո-
վականներից խնդրում է արտայայտվել
հետևեալ խնդիրների մասին.

- 1) Որքան է ցանկալի արդեօք. բաւակա-
նանալ առաջած դպրութեան ունեցող դպր-
ոցներին օժանդակութիւն տալով միայն
թէ խորհրդի նախաձեռնութեամբ նոր
դպրոցներ սկսել բանալ:
- 2) Օժանդակելով գոյութիւն ունեցող
դպրոցներին, խորհուրդը ինչպիսի և ինչ
սանձանների մէջ իրաւունքներ պիտի ու-
նենայ այդ դպրոցների ներքին ու վարչա-
կան գործերի վերաբերեալ:
- 3) Ի՞նչ տակի դպրոցներ են ցանկալի,
որ լինեն խորհրդի բացելիք դպրոցները:
- 4) Ի՞նչ եղանակով պիտի կազմված լինի
բացվելիք դպրոցների վարչական մասը:
- 5) Ո՞րպիսի կարգով բանալ նոր դպրոց-
ները. հոգեւոր իշխանութեան միջոցով ար-
դեօք, ինչպէս որ սովորաբար բացվում են
մեր ծխական դպրոցները, թէ՛ այն կար-
գով, ինչպէս որ բացվում են մասնաւոր
դպրոցները առանձին անհատների անու-
նով:

Այս հարցերի վերաբերմամբ ժողովական-
ների մեծ մասն այն կարծիքը յայտնեց, որ
շատ աւելի ցանկալի է, որ ընկերութեան
խորհուրդը ինքը բանալ նոր դպրոցներ,
քան թէ եղած դպրոցներին օժանդակել:
Իսկ գոյութիւն ունեցող դպրոցներին օ-
ժանդակելու դէպքում, լաւ կը լինի, որ
խորհուրդը չէ. խախտելով հանրեւ
հոգաբարձական իրաւունքները, մի որեւ
կողմակողմ կօտրուի վերահսկողութիւն ու-
նենալ:

Բացվելիք դպրոցների վերաբերմամբ մե-
ծամասնութեան կարծիքը այն եղաւ, որ
նրանք լինին ոչ թէ ամեն տեղ միեւնոյն
շարժումով շինված ծրագրով, այլ որ իւրա-
քանիւր վայրում բացվող դպրոցը լինի
նա թէկուր տարրական 2—3 տարրակ
դասընթացով, ունենայ իր յատուկ ծրա-
գիր այնպէս յարմարեցնած տեղական ժո-
ղովրդի կեանքի պայմաններին և շուրջին-
քի ծառայութեան միջոցները թոյլ տան, որ
որեւ լայնօրէն, բանալով մի քանի այդ
տիպի դպրոցներ, նա բանալ այդ լայնի
կենտրոնական տեղում և մի աւելի բարձր,
միջնակարգ մասնագիտական դպրոց, որը
կարողանան իրանց ուսումը շարունակել
միւս տարրական մասնագիտական դպրոց-
ներէն աւարտողները:

Խորհրդի նախաձեռնութեամբ ու մի-
ջոցներով բացվող դպրոցները կը գտնվին
խորհրդի հսկողութեան տակ, ունենալով
հանդերձ ժողովրդից ընտրված հոգաբա-
նուներ:

Դատվ վերջին 5-րդ հարցին, այն է թէ
ինչպիսի կարգով բանալ նոր բացվելիք
դպրոցները, ժողովականների մեծ մասը
այն կարծիքը յայտնեց, որ, ի նկատի առ-
նելով մեր երկրի ներքին քաղաքականու-
թեան անկայուն միջանկիւ աւելի լաւ է, որ
դպրոցները բացվին այն կարգով, ինչ կար-
գով որ բացվում են մեր ծխական դպրոց-
ները:

Ժողովի վերջում նախագահը շնորհակալու-
թիւն յայտնելով խորհրդի կողմից ժողովա-
կաններին տալով, որ արտայայտված կարծի-
քներն ու խորհրդակցութիւնները, անշուշտ,

ի նկատի պիտի ունենայ խորհրդի ուսում-
նարանական մասնախումբը բացվելիք ու-
սումնարանների համար ծրագիրներ ու կա-
նոնային ժամանակ խորհրդի կողմից, որ հէնց
այդտեղ ժողովականները մի քանի մարդ են
ընտրել, որոնք խորհրդի ուսումնարանական
մասնախումբին հետ միասնալով կատարեն պէտք
եղած աշխատութիւնները: Բայց ժողովական-
ները հրաժարվեցին ընտրութիւն կատարելու-
րեց, աւելով որ ուսումն. մասնախումբը
թող ինքը հրաւիրի իրան հարկաւոր ան-
ձանց: Կանոնադրութիւնը պատրաստվելուց
յետոյ պիտի նորից ենթարկվի ձեռնարկ
անձանց ընտրութեան:

Ժողովը վերջացաւ ժամը 2-ից անց:
Բնագործոր

ՃԱՆԱԳԱՐՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՆԱՐԿՆԵՐ

Իմ միայնիս պատասխանատու էր:
Եւ յանձն առաջնաւ, որովհետեւ գեղեցիկ
էր նրա նպատակը:

Իսկ գեղեցիկ նպատակին և չէի դիմում
ստորագրեցի ճանապարհով:

Եւ որդեցի գնալ:
Երեկոյան ժամը 9-ին, ճանապարհորդա-
կան պարտակը ձեռքիս, ևս արդէն գտնու-
վում էի նաւամատուցի վրա:

Մի խումբ ճանապարհորդներ, գլխաւ-
րապէս թուրքեր, խնդել էին անցել առեւ-
երկու ոտորկաններ, իւրաքանչիւրին լաւ
խուզարկելուց յետոյ, հերթով ներս էին
թողնում նրանց «Կուրսակալներ» շոգնետը:
Նոյն կարգով, թէև մի փոքր քնքոյշ ու
քաղաքական շոգնետներէն յետոյ, —երեկի,
երկրորդ կարգի տոմսակ և արտաքին
պատկառանք էին ներշնչում, —ներս մտալ
ևս եւ:

Ցոյց տուին իմ կայուստը. Իրենս տեղա-
ւորեցի և թէթելած զուրս եկալ ընդհա-
նոր դահլիճը, ուր նստած դուրսում էին
միասին հայ, վրացի, ռուս, թիւրքեր:

Այդպիսի մի խանութի համար բնակա-
նաւոր բնհանուր խօսակցութեան լիզուն
ոչ այնքան ուսումնական էր, որքան թուր-
քերին, որովհետեւ վերջինների համակրելի
բարբերի ու նրա ու կացի շուրջն էր պը-
տրում ընդհանուր խօսակցութիւնը:

Ուղիղ ժամը 9 և 30 րոպէին «Կուրս-
ակալներ», հրաժեշտ անհանգիստ ուղուց-
ներով, գանգաղաշարք սկսեց հեռանալ Բա-
գուի փեթից:

Մի ժամից յետոյ՝ խռովված ծովի տաւու-
րեղով ալիքները ձեռքբրլում ան արդէն ա-
ռաւ էր նստում կարգալի նստ, ալ կողքից
բայ տալով վերստապի պտուտակի վրա
ամբարանը երկար լարը. իսկ ջուրը ու վը-
շուր եղած, փոշիացած ալիքները, հակա-
ռակորդը զապիւր բոլորովին անկարող, լա-
ւանաւոր գրեթե անկողնում էին իրար հետ,
և բաժի ու քրքրելի մէջ թափված, եր-
կարք, բայց միմեծի շարանով, գլխիկը
վաղում յաղթողի ետքից՝ պղպշաններ շաղ
առալով:

Սակայն «Կուրսակալներ» սկսում էր
աւելի արագ ու վստահօրէն, առանց ուշա-
րութիւնի դարձնելու ալիքների անգոր
դայութիւն ու նրանց պատճառած հարուած-
ները վրա:

Այդ հարուածները սակայն զգալի էին,
շոգնետը ձգվում, օրօրվում էր. նա ալի-
քանաւ ինչում էր ու բարձրանում:

Ճանապարհորդներից մէկը արդէն հայո-
քածի դերն էր խաղում, իսկ նրա հարևանը
պատուիրած ընթերցից հագուի մի կտոր
միայն բերանը դնելով ստիպված կղա-
հանաւ իր կայուստը...

Նա առաջին անգամը չէ՞ որ գնում էր
ծովով, բայց և անպէս չէր կարողացել ընտե-
րանալ ծովային ճանապարհորդութեան պա-
մաններին:

Դա ինչ համար նորութիւն էր ի, ի հարկէ,
ունեցեալ իր աղբեցութեանը: Անգլիացի կե-
պով ևս էլ հետեցի նրա օրինակին...

Մենք բաւականաչափ հեռացել էինք ա-
փերից, ծովի յուզմունքը անցիլ էր արդէն
և նաւը լողում էր առաջ՝ անվերջ, առանց
խանգարելու ճանապարհորդների հանգիստ
ընում:

II
Արեւի ջերմ շողերը վաղ առաւօտից ար-
դէն խաղում էին ծովի ջրին ու կապուտակ
ալիքների հետ, երբ ևս զարթոնքիւրէաւ հազ-
նելուց յետոյ, եւ բարձրացալ վերնալարի
առաջնակամարը: Այնտեղից արդէն նշու-
րել էին լիւնը հեռուր մշուշ մէջ շարա-
ված Կրասնովոդսկի սարերը, զէպի որը վե-
հաւանքում անսահման կապուտակի միջև
ստնում-մտնում էր միջօթմանոց շոգե-
նաւը: Մեր ետեցի ծով տաւը քայլ հեռա-
ւորութեան վրա երկու սպիտակ թուղուններ
հախում էին օդի մէջ և, խուզարկու ոտո-
րիկները նստալ, անկապել հետում մեզ:

Մէկը մի կտոր հաց նետեց ծովը, թըռ-
չունները երկուսը, մանգաղաձե թուղնով
ցած ինչու, և նրանցից մէկը որսաց կտորը,
զեռ ևս ջրին չը հասած:

Քիչ յետոյ վերնալարի վրա երեւաց մի
ծիծաղեղծ երեւոյթանք կէն:

Առանց ձեռնակ մանաթութեան մենք
սկսեցինք զրուցել մեր ճանապարհորդական
պաւարութիւններ:

Խօսակցից ինտելիգենտ վրացուհի էր: Նա
վերադառնում էր հայկական մի խուլ ան-
կիւնից, ուր նրա հայրը գաւառագետի պաշ-
տօն էր վարում:

Պարզ բան է խօսակցութեան նիւթը ան-

միջապէս փոխվեց զվազացու կեանքի ու ա-
նորայ ցուերի շուրջը:

Արդէն ժողովի էինք Կրասնովոդսկին.
Ինչպէս և պատրաստվեցինք դուրս ելնելու:
Շուրջնաւը կանգնեց նաւամատուցի առջև:
Երրորդ կարգի ճանապարհորդները դուրս
էին գալիս իրանց բնից. յանկարծ մի սուր
ճիւղ բարձրացաւ և մի թուրք, թրքուհի և
նրա տղան, գլուխները ձեռնելով, սկսեցին լալ:
Բանից երեւաց, որ սանդուղներով վերե-
րաձնանալիս յետեցի կտրում են թրքու-
հու զրպանը և տանում նրա 200 ր. փողը:
Ինչոյն սկսեցին խուզարկել երրորդ կար-
գի ճանապարհորդներին. թոյլ տուին ցա-
մաք իշխելու միայն ա. և ր. կարգի ճանա-
պարհորդներին:

Այդտեղ մենք բաժանվեցինք:

Աշխատակից

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մարտի 3-ի երեկոյան թիֆլիսի ժողո-
վարանում դերասան Արմենանը հայ դե-
րասանական խմբի անդամների մասնաւ-
ցութեամբ տուեց մի ներկայացում: Խա-
ղացին Բրեյտի 3 գործողութեամբ «Ախ-
տաղներ» պիէսը, թարգմանութիւն Ար-
մենանի, և թրքիստան Բէշարի 1 գործո-
ղութեամբ «Աղբիւրներն խօսելու եղանակը»
կոմէդիան, թարգմանութիւն նոյնի, որ
տրվում էր ժողովրդի ինդրանքը երկրորդ
անգամ:

«Ախտաղներ» պիէսի նիւթը շուրջում
է ժամանակակից մարդկութեան ամենա-
սովալի ճիւղալիսի սիֆիլիսի տարած-
ված լինելու հարցը, իր դարաւորելի հե-
տաւորներով: Թէև պիէսի նիւթը լաւ է և
ժամանակակից, մինչև իսկ թատերական
նորութիւն, սակայն նրա բեմական-տեխ-
նիքական կողմը կարգում է, անպէս որ նա
թողնում է աւելի դասախօսութեան, քան
թէ թատերական գրուածքի տպաւորու-
թեան: Այդ էր պատճառը, որ այդ պիէսը
բաւական ձանձրացրեց ոչ այնքան բազմա-
թիւ ունեղողի հասարակութեանը: Մասնա-
կանը ձանձրալի էր նրա առաջին գործողու-
թիւնը, ուր մի ամբողջ ժամ, այդ գործո-
ղութեան ամբողջ ընթացքով, առանց տե-
սարար փոխանցի, սիֆիլիսիտ ախտաւորը
խօսում է բժշկի հետ:

Այդ պիէսի ներկայացման ժամանակ
իրանց խաղով աչքի ընկան պ. Վ. Միլ-
լայան, ս. ա. Ս. Սարգսի և Ն. Ն. Ն. Ն. Ն. Ն.
ստամբ պ. Արմենան և մասնաւոր օր. Ս.
Արմենան, որ ուղղակի տեղ-տեղ հրաշա-
լի էր:

Պիէսի պատճառած ձանձրոյթը մարա-
կան կոմիդիայի ներկայացումը, որ բաւա-
կան գոտարացրեց ճանապարհորդներին: Կո-
միդիայի մէջ առանձին աշխոյժով խաղա-
ցին պ. պ. Արմենան, Գ. Բի

